«օգնէ» յիշելու քու թերութիւններդ որպէսզի Տիրոջը չմօտենաս։ Դուն դիմադրելու ես Սատանային սուտերուն եւ վստահօրէն մօտենալու ես շնորհքի գահուն, գիտակցելով որ Տէրը կարօտով քեզի կը սպասէ։

Շատեր աղօթքը կը նկարագրեն որպէս Աստուծոյ հետ խօսիլ։ Ինչպէ՞ս կրնամ ընել։

Շատ մը յարանուանութիւններ մեթոտ մը, կերպ մը ունին աղօթելու, նոյնիսկ գրուած աղօթքներ ունին որոնք կրնաս կրկնել։ Յիսուս մեզի օրինակ մը տուաւ եւ այդ Տէրունական Աղօթքն է (Մատթ. 6։9-13)։

Յիսուս Տէրունական Աղօթքը չի տուաւ որպէսզի կրկնենք կամ արտասանենք։ Փոխարէն կ՚ուզէր մեզի սորվեցնել աղօթքի մը բովանդակութիւնը։ Նախ սկսաւ փառաբանութեամբ ետքը ղեկը յանձնեց Աստուծոյ ըսելով «Քու կամքդ ըլլայ», ապա տուաւ խոստովանութիւնը որպէս աղօթքի կարեւոր մէկ բաժինը։ Ներկայիս խոստովանութիւնը կը թարգմանուի որպէս շնորհակալութիւն եւ ենթարկուելու պատրաստակամութիւն։

Հոգ չէ թէ ինչպէս կ՚աղօթես, Տէրոջ հետ մտերմութիւն ունենալը ժամանակի կը կարօտի։ Կրնամ քեզի վստահեցնել որ եթէ սրտանց սկսիս Տիրոջը հետ խօսելու, անպայման պիտի աձիս քու յարաբերութեանդ մէջ։

Աստուած պիտի պատասխանէ աղօթքներուդ, Իր խօսքին միջոցով կրնայ բլլալ կամ եկեղեցական պաշտամունքի ընթացքին ու յաձախ մեղմ ձայնով մը, Սուրբ Հոգիին միջոցով։ Մինչ կ՚աղօթես խնդրէ որ Տէրը Ինքզինք յայտնէ քեզի, եւ Ան կը խոստանայ յայտնել (Մատթ. 7:7-8)։

Ինչո՞ւ կը թուի որ Աստուած չի պատասխաներ իմ աղօթքներուս։

Ընդունուած վիճակ է որ Աստուած խնդրածդ պիտի տայ, եւ այս ապացուցելու համար յաճախ Մաղմոս 37։4-ը գործածուած է որպէս օրինակ, սակայն համարին առաջին բաժինը կ՝անտեսուի, որուն մէջ կը կայանայ այս համարին իրական նշանակութիւնը։

Եթէ հոգեւոր բաները հաձոյք կը պատմառեն քեզի եւ Աստուծոյ կամքը խիստ կարեւոր է քեզի համար, դուն կրնաս վստահ ըլլալ որ Աստուած քու փափաքներդ պիտի կատարէ։ Բայց երբ փափաքներդ կը խառնես անձնական ծրագիրներուդ, Աստուած կրնայ չպատասխանել աղօթքներուդ (Յակ. 4:3)։

«Տէր, շնորհակալ եմ Քու օրհնութիւններուդ համար, օրս Քեզի կը յանձնեմ։ Իմ մտահոգութիւններս եւ փափաքներս ոտքերուդ առջեւ կը դնեմ։ Խնդրեմ առաջնորդէ ինծի այս օրուան մէջ, օգնէ որ նախասիրութիւններս դասաւորուին Քու կամքիդ համաձայն։ Ցոյց տուր Քու ծրագիրներդ իմ կեանքիս համար»։

Այս աղօթքը միշտ ալ պիտի պատասխանուի։ Միակ փափաքը այս աղօթքին մէջ Տիրոջը կամքին մէջ ուրախութիւն ունենալն է։

Աղօթէ ու պիտի աձիս։ 👁

RUB UFTSUPUTUTUT ԵՂԲԱՑՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

1800 Lake Street Glendale, California 91201 USA

Phone: (818) 507-7400 AEBCGlendale.org Email: info@AEBCGlendale.org

Revised 2024



Հոգեւոր Ամումի Շարքէն

በታዕውቱ

- Ի՞նչ օգտակարութիւն ունի աղօթքը
- Ինչո՞ւ կը թուի որ Աստուած չի պատասխաներ իմ աղօթքներուս։
- Ես Քրիստոնեայ չեմ, բայց Աստուծոյ օգնութեան պէտք ունիմ։ Ի՞նչ կրնամ աղօթել։
- ℴ Եթէ Յիսուս Աստուած է, ինչո՞ւ աղօթեց։





NUS UPPSULUTUUUT TABUSLITAN THE THE SPEAK ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

Ճանչնալ Յիսուս Քրիստոս եւ Ճանչցնել զԱյն



Ի՞նչ կր նշանակէ «Ամէն»։

«Ամէն» Եբրայերէն բառ մըն է որուն արմատ բառը «աման» է, որ կը նշանակէ «հաւատարիմ ըլլալ. օժանդակել եւ կամ հաստատել»։ «Ամէն» բառը կը նշանակէ «այդպէս ըլլայ» կամ «իրապէս»։

Հետեւաբար. երբ մեր աղօթքները կը վերջացնենք «Ամէն»-ով, կը հասատատենք մեր նուիրումը Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի միջոցով։ Նոյնպէս հետեւելով անձի մը աղօթքին կը հաստատենք միտք մը, նախադասութիւն մը։

Եթէ Յիսուս Աստուած էր, ինչո՞ւ աղօթեց։

Նոյն հարցումը կարելի է հարցնել Յիսուսի ուտելուն, ցաւելուն, լալուն եւ քնանալուն մասին։ Յիսուս երկրի վրայ գտնուած ժամանակ, կատարեալ Աստուած էր եւ կատարեալ մարդ էր։ Յիսուսի նպատակներէն մէկը մարդոց սորվեցնել էր ինչպէս ապրիլ աստուածային կեանքը։ Լաւագոյն կերպը այդ ընելու ըլլալ էր մեզի նման եւ ընդօրինակելի օրինակ մը հանդիսանալ։

Ան կախեալ էր Իր Հօրմէն, Անոր կամքը փնտռեց եւ Անոր փափաքեցաւ։ Մենք ալ կանչուած ենք նոյնը ընելու։ Յիսուս ոչ միայն մարդ էր, այլ նաեւ մարդուն մեղքին պատիժը Իր վրայ առաւ։ Խաչին վրայ տառապալից աղաղակը մեծագոյն վիշտն էր որ կրեց երբ զգաց բաժնուած Հօր Աստուծմէն։ Ան աղաղակեց, «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ գիս թողուցիր»։

Յիսուս տեսաւ մեղքին բաժնող, հեռացնող իրավիճակը։ Դուն ալ նոյն օրինակով, աղօթքով Տիրոջը դառնալու ես։

Ի՞նչ օգտակարութիւն ունի աղօթքը։

Աղօքթը այն հաղորդակցութեան կերպն է որ Տէրը տուած է մեզի, որպէսզի միշտ Իրեն հետ հաղորդակցինք։ Ին չ առանձնաշնորհ։ Մենք կը խօսինք մեր ծնողներուն, գործատէրերուն, ընկերներուն եւ ուրիշ շատերու հետ։ Որքան աւելի կարեւոր է ու արժէքաւոր խօսիլ Երկնաւոր Հօրը հետ, որ կը լսէ ու կը պատասխանէ (Սաղ. 91։15, Եսայ. 65։24, Մատթ. 7։7)։

Աստուծոյ խօսքին մէջ յստակ է որ Ան կը սպասէ մեր աղօթքներուն եւ կ՝ուգէ պատասխանել անոնց։

Եթէ տակաւին Յիսուս Քրիստոսը չունիս քու անձնական փրկիչդ եւ չես սկսած Իր հետը հաղորդակցիլ, մտերմիկ յարաբերութիւն մշակել, կրնաս ունենալ եւ աղօթել, հոգ չէ թէ ինչ է նիւթդ։

Շատ պարզ է, աղօթէ ընդունելով որ մեղաւոր ես եւ պէտք ունիս ներումի, խնդրէ որ մաքրէ քեզ եւ կեանքիդ մէջ բնակի (Ա. Յովհ. 1:9)։

Ես Քրիստոնեայ չեմ, բայց օգնութեան պէտք ունիմ. ի՞նչ կրնամ աղօթել։

Կ՝ըսես թէ Քրիստոնեայ չես, բայց տակաւին հաւատք ունիս որ Աստուած կրնայ օգնել քեզի։ Եթէ կը հաւատաս որ Աստուած քեզի օգնելու զօրութիւն ունի, եւ նաեւ կը հաւատաս որ պիտի լսէ քու աղօթքներդ եւ պատասխանէ, ինչո՞ւ տակաւին Իր փրկութեան ձրի պարգեւը չես ընդունիր։ Ձրի է, թէեւ մեծ գին վճառուած է, բայց քեզի ձրի կը տրուի (Ա. Յովհ. 1։9, 3։16)։

Անգամ մը որ Յիսուս քու կեանքէդ ներս կը մտնէ, ամէն պէտքի համար կրնաս Իրեն դիմել (Եսայ. 65։24, Մատթ. 7։7)։ Աղօթքը պարզապէս կարիքներդ ու վախերդ Տիրոջը ներկայացնելէ աւելի բան մըն է, սիրոյ մտերմիկ խօսակցութիւն։

Վերջապէս պիտի հասկնաս թէ ինչպէս Տէրը կը գործէ կեանքիդ մէջ եւ աղօթքներդ աւելի փառաբանութիւն եւ շնորհակալութիւն պիտի ըլլան։ Աստուած օրհնէ քեզ մինչ Զինք կը փնտռես։ Քաջատեղեակ եղիր թէ Ինք միշտ քեզի կը փնտռէ։

Եթէ Յիսուսի չեմ հաւատար, արդեօ՞ք կրնամ տակաւին Աստուծոյ աղօթել։

Յիսուս եւ Աստուած մէկ են։ Կարելի չէ Աստուծոյ աղօթել ու Յիսուսը զանց ընել։ Երբ Յիսուսի չես հաւատար, միջոց չունիս Աստուծոյ դիմելու, մօտենալու (Յովհ. 14:6)։

Առաջին աղօթքը որ Աստուած կը լսէ ու կը պատասխանէ փրկութիւն եւ ներում ունենալու աղօթքն է։

Անգամ մը որ հաղորդակցութիւնը հաստատուած է, դոները բաց են շարունակական յարաբերութիւն ունենալու աղօթքի միջոցով (Մաղ. 91:15, Եսայ. 65:24 եւ Մատթ. 7:7)։

Երբ կ'աղօթեվ, անցեալի մեղքերս կը յիշեմ։ Արդեօ՞ք կը նշանակէ որ անարժան եմ աղօթելու։

Ո՛չ։ Աստուած կ՚ուզէ որ խոնարհութեամբ Իրեն մօտենանք եւ խոստովանինք մեր մեղքերը եւ հրաժարինք անոնցմէ։ Ան չուզեր որ նախ փոխուինք ու կատարեալ ըլլանք ապա Իրեն երթանք։ Ան կ՚ուզէ որ Իրեն երթանք որպէսզի մեզի փոխէ (Եբր. 4։16)։

Նաեւ պէտք ունիս գիտակցելու որ թշնամի մը կայ եւ ան կը գործէ քեզի դէմ։ Երբ Տիրոջը կը դիմես Սատանան կ՚ուզէ որ փախչիս ու հեռանաս որովհետեւ անարժան ես։ Ան պիտի